Միացեալ Նահանգներու մէջ անկար շարժապատկերի մարզին նուիրուած ամենէն հեղինակաւոր փառատոններէն մէկը՝ «Սանտընս Ֆիլմ Ֆեսթիվըլը» տեղի ունեցաւ 16-26 Յունուարին: Զանազան երկիրներէ եկած շուրջ վաթսուս ժապաւեններու կողքին, փառատոնին ընթացքին ներկայացուցաւ ռուսագերմանական միացեալ արտադրութիւն եղող ժապաւեն մը՝ «Ֆրեսքոչ», որ քանիցս ցուցադրուած է փառատոնին ընթացքին:



Տեսարան մը՝ Ա. Կուրթմանի ժապաւենին

յացնէ Հայաստանի ժամանակակից կեանքը: Հակառակ երկրաշարժէն վերապրել փորձող եւ յետխորհրդային տնտեսական տագնապին մէջ գտնուող երկրին դժուար վիճակին, ժապաւենին կերպարները կը գնահատեն կեանքը, բան մը, որ Կուրթմանի կարտայայտէ պարզ տեսարաններու միջոցով լուսանկարիչ մը կը նկարէ, որմնադիր մը տապալման արդիւնքն է: Թաղումէն մինչեւ պատերազմի տարեկան ընթացքը իր տեղը կը գտնէ Կուրթմանի տեսադաշտին մէջ: «Ֆրեսքոչ»ի մասին «Սանտընս Ֆիլմ Ֆեսթիվըլը»ի նկարադրական ժապաւենի պաւնկալութեան է իրրեւ «հանդարտօրէն» քննարկական եւ շնչասպառօրէն գեղեցիկ» գործ,

զոր Ա. Կուրթման ստեղծագործած է՝ անոր արմատները խարսխելով վայելչօրէն բանաստեղծական երանգապնակի մը մէջ թափուած ռուսական պատմի ոճին մէջ:

Աւելի քան յիսուն վաւերագրական ժապաւեններու հեղինակ Ալեքսանտր Կուրթման կը նկատուի Ռուսիոյ ամենէն հեղինակաւոր բեմադրիչներէն մէկը: Բազմաթիւ մրցանակներու արժանացած այս բեմադրիչը իր կերպարներուն ընդմէջէն կը նկարէ ռուսերու եւ Ռուսիոյ մերձակոր երկիրներու ժողովուրդին դժուար կեանքն ու ամէնօրեայ մտահոգութիւնները: Նշանք, որ ժապաւենին պատրաստողներն իր մասնակցութիւնը՝ բերած է նաեւ Ճիւլիան Գասպարեան:

2003Ի ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԺԱՊԱԿԵՆԸ՝ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԲԵՄԱԴՐՈՒՄ ԱՐՏԱԻԱԶՊ ՓԵԼԷՇԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայկական շարժապատկերի հսկաներէն հանդիսացող բեմադրիչ եւ բեմադրի Արտաւազը Փելէշեանի ծննդեան 65ամեակին առիթով պատրաստուած է «37 ռոպէ Արտաւազը Փելէշեանի մասին» վաւերագրական ժապաւենը: «Երեւան» սփիւտիոյ կողմէ հրատարակուած այս ժապաւենին առաջին ցուցադրութիւնը տեղի ունեցած է Երեւանի մէջ, 24 Յունուարին: Նշենք, որ այս ժապաւենը կը հանդիսանայ 2003ին հրատարակուած Հայաստանեան առաջին ժապաւենը: Ժապաւենին արտադրիչն է Տիգրան Խզմայեան:

«37 ռոպէ Արտաւազը Փելէշեանի մասին» ժապաւենին մէջ համաշխարհային շարժապատկերի դէմքեր կ'արտայայտուին Արտաւազը Փելէշեանի մասին: Ժապաւենը նաեւ կ'ընդգրկէ արուեստագէտին «Մենք», «Տարուան եղանակները», «Վերջ» եւ «Կեանք» ժապաւեններէն տեսարաններ:

Տասնամեակներէ ի վեր հայերն, խորհրդային եւ միջազգային շարժապատկերի աշխարհին մէջ իր ուրոյն տեղը ունեցող Արտաւազը Փելէշեան, իր բեմադրած աւելի քան տասնեակ մը վաւերագրական եւ գեղարուեստական ժապաւեններուն կողքին, հեղինակած է նաեւ շարժապատկերի տեսութիւններու մասին հատորներ, որոնցմէ յիշենք «Իմ շարժապատկերս» գործը (1988): Իր ժապաւեններուն մէջ բեմադրիչը յաջողած է միաձուլել վաւերագրական եւ գեղարուեստական ժապաւեններու սահմանները եւ զանոնք ներկայացնել իրրեւ բանաստեղծական մէկ ամբողջութիւն:

Վերջին տարիներուն նիւթական սահմանափակ միջոցներու պատճառով նոր ժապաւեններ կ'արտադրուին: Իսկ 2002ի Դեկտեմբերին Փարիզի մէջ «Փաթրի» Հիմնադրամին կողմէ կազմակերպուած «Միլենիում» արուեստի փառատոնին ծիրէն ներս հայ արուեստագէտը ներկայացուցաւ է 20րդ դարու համաշխարհային շարժապատկերը:

7167 ՀՈՉԻ ԴԻՏԱԾ Է «ԱՐԱՐԱՏ»Ը

Իր ցուցադրութեան առաջին շաբաթուան ընթացքին «ԱՐԱՐԱՏ» ունեցած է 7167 ռոպէ մուտք: Ժապաւենը կը գրաւէ լիբանանցի սրահներու տոմսակներու վաճառքի երկրորդ դիրքը:

ՄԻՔԵԼԱՆՃԵԼՕ ԺԼԱՍԵՐ

ՇԵՂԵՆԱԿԻ ՍԸ ՇԱՍԱԶԱՅՆ, ԿԵՐԱԾՆՈՒՆԴԻ ԿԱՐՊԵՏԸ ԲՈԼՈՐ ԺԱՍԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՄԵՆԵՆ ՇԱՐՈՒՍ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆ ԵՐ: «ՏԸ ՆԻՒ ԵՈՐԲ ԹԱՅԱՅ» ԿԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԵ.

Ճլորանս. այս ոսկեգոծ քաղաքը այցելողը գրեթե վայրկենապէս կը հիանայ ի տես Միքելանճելոյի ստեղծագործական գործերու քանակով: Ան աշխարհէն հեռացած է իր ետին ձգելով արուեստի ամէնէն վեհաշուք գործերը... գմբէթներ, մատուռներ եւ արձաններ:

Սակայն ասիկա պատկերին մէկ երեսն է միայն, իսկ միւս երեսը նուազ հրապուրիչ է: Դաւիթի արձանին կերտումէն կէս հազարամեակ ետք, այժմ ի յայտ կու գայ, թէ այն մարդը, որ իր ժամանակն ու ուժը շուրջած է վերածնունդի բազմաթիւ գլուխ գործոցներ ստեղծելու համար, իր դրամը չէ շուրջած ուրիշներուն, ոչ ալ՝ իր անձին:

Իրականութեան մէջ Միքելանճելոյ ժյուտ էր:


Գլխից արտաքին կ'երգարկացնէ վերջերս հրատարակւած գիրք մը՝ «Տը ուէթ աֆ Միքելանճելոյ» (Միքելանճելոյի հարստութիւնը), որուն հեղինակը՝ արուեստի պատմաբան մը վերածնունդի ժամանակներու արխիւներու մէջ գտած է Միքելանճելոյի անծանօթ հարստութեան եւ թաքուն խնայողութեան զարմանալի մէկ ապացոյցը:

Թէեւ Միքելանճելոյ յաճախ գանգատած է, թէ թշուառութեան մէջ կ'ապրի, եւ յաճախ պատկերուած է իբրեւ ընչազուրկ արուեստագէտ, սակայն, երբ մահացած է 1564ին, իր ետին ձգած է այսօրուան չափանիշներով քանի մը հարիւր միլիոն տոլարի հարստութիւն, ինչպէս կ'ըսէ Միքելանճելոյի համալսարանին մէջ ամբերկացի դասախօս Ռապ Զէթֆիլտ:

Այս գումարը Միքելանճելոյի կեանքին վերջերուն երկիրքէն ինկած հարստութիւն մը չէր: Զէթֆիլտի ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, թէ Միքելանճելոյ իր կեանքին 89 ամիսներուն յուսանցքային, միլիոն կամ հսկայական հարստութեան տէր արուեստագէտ մը եղած է, սակայն մերժած է ցուցադրել իր հարստութիւնը եւ յաճախ մերժած է բաժնիլ գայն:

«Ան ըոյր ժամանակներու ամէնէն հարուստ արուեստագէտը եղած է, գլխից՝ մինչեւ իր ժամանակները, կ'ըսէ Զէթֆիլտ: Ան մեծ գումարներ կը գանձէր, ինչ որ անհարմարաց էր»:

Այսուհանդերձ, Զէթֆիլտի համաձայն, Միքելանճելոյ իր ընտանիքին անդամներուն կը գանգատէր, թէ դրամական նեղութեան մէջ էր՝ զաւելտարանն նկարագրութիւններով



Միքելանճելոյ, ինքնանկար:

ողբալով իր ճակատագիրը եւ վանելով օգնութիւն հայցող անոնց դիմումները:

Երբ Միքելանճելոյ երկու օգնականներու հետ կը ճամբորդէր, մէկ անկողին կը վարձէր իրենց երեքին համար: Պատճառը սեռային չէր, ինչպէս կ'ըսէ Զէթֆիլտ, այլ տնտեսական: Արուեստագէտը իր հարստութիւնը կը դիզէր գաղտնաբար:

Զէթֆիլտ իր ուսումնասիրութիւնը սկսած է 8 տարի առաջ եւ իր վրայ ուշադրութիւն հրաւիրած է վերջին քանի մը ամիսներուն, հրատարակել է ետք իր գիրքը, որ իտալիոյ մէջ անգլերէնով գրուած ակադեմիական ավարտաճառ մըն է:

Ուսումնասիրութիւնը ճոխ մանրամասնութիւններ աւելցնելով կը հաստատէ արուեստի պատմաբաններու այն կարծիքը, թէ Միքելանճելոյի հոգեգմայլութիւնը խափանած որեւէ կսկիծ դրամական չէր կրնար ըլլալ, ինչպէս կը կարծեն շատեր:

Միքելանճելոյ 30 տարեկանին արդէն քանդակած էր Դաւիթի արձանն ու Աստուածամայրը, իսկ անոր պահանջած գինները անոր հուշակին նման վիթխարի էին:

Զէթֆիլտ տարբեր նպատակներ հետապնդող իր ուսումնասիրութեան ընթացքին կեդրոնացած է այս կէտին վրայ՝ հետազոտելով Միքելանճելոյի դրամատնային բազմաթիւ հաշիւները, որոնք ցարդ չեն ուսումնասիրուած:

Զէթֆիլտ կը փորձէր ճշդել այն ժամանակահատուածները, երբ Միքելանճելոյ գծած է Միսթինեան մատրան տարբեր տեսարաններ պատկերող որմնանկարները: Այս գործին վերաբերող Միքելանճելոյի կարգ մը անթուակիր նամակները կ'ակնարկեն դրամատնային հաշիւներու:

«Եթէ կարելի ըլլար գտնել դրամատնային հաշիւները, կարելի պիտի ըլլար ճշդել նամակներուն թուականը», կը բացատրէ Զէթֆիլտ: Հետեւաբար ան յաջողած է գտնել գանձը այն վայրին մէջ, ուր Լէոնարդո տա Վինչիի մանրագին կերպով ուսումնասիրուած դրամատ-

նային հաշիւները յայտնաբերուած են նախապէս:

Զէթֆիլտ ակնարկութիւններ գտած է ոսկեղորմաներու մասին, որոնք այսօրուան չափանիշներով համագոր են հարիւր հազարաւոր տոլարի:

«Երբ տեսայ թիւերը, մոռցայ Միսթինեան մատրան առաստաղը», կ'ըսէ Զէթֆիլտ:

Զէթֆիլտ այս արձանագրութիւններուն մէջ իր յայտնաբերած տեղեկութիւնները ազուցած է Հոնոմի մէջ դրամատնային այլ հաշիւներու, ինչպէս նաեւ՝ Միքելանճելոյի յաճախ ուսումնասիրուած նամակներուն եւ կենսագրութիւններուն:

Արդիւնքը պատկերն էր մեծապէս յաջողած, տարօրինակ կերպով խիստ սակաւապետ եւ մեծ նախաձեռնութիւններ իրականացնող արուեստագէտի մը, որ առանցքային տիպար մըն էր ստեղծագործ հանճարներու շարքին եւ յարգանք կը վայելէր իբրեւ յայտնի, իսկ իբրեւ արհեստաւոր՝ ըոյրէն տարբեր վարմունքի եւ վարձատրութեան կ'արժանանար: Ան շատ լաւ կը վարձատրուէր:



Աստուածամոր քանդակը՝ «Փիթա»-ն Վատիկանի Ս. Պետրոս եկեղեցիին մէջ:

Երբ Միքելանճելոյ կը պատկերագրէր Ճլորանի Լորենթեան գրադարանը, ան Քլեմենթ Է. պապին այսօրուան չափանիշներով տարեկան 600 հազար տոլար կը ստանար, կ'ըսէ Զէթֆիլտ:

ՉԵՐ ԴԵՐԱՍԱՄԱՆՆ ԵՄ ԱՅՍ ԳԻՇԵՐ

ԼՈՆՏՈՆԻ ԲԵՄԵՐՈՒՆ ԿՐԱՅ ԱՆԱԿՆԿԱՆՆԵՐԸ ԱՐԴԻՆԱԿԵՏ ԵՆ. ԽՈՐՀՐԴԱԲՈՐ ՇԻՐ ԱՍՏՂԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՇԱՆԴԱՍՏԵՍՆԵՐ ԿԸ ՆԵՐԳՐԱԷ: «ԹԱՅԱ» ԿԸ ԲԱՅԱՏԻ, ԹԵ ԻՆՉՊԵՍ.

Երբ Քայլայ Մինոկ բեմ բարձրացաւ Լոնտոնի «Ուայնտ Մար» թատերասրահին մէջ, հանդիսատեսները «ուի լաւ ետ» պոռագին եւ ուրախութեան բացազանութիւններ արձակեցին: Անոնք չէին գիտեր, թէ աստղալիայի երգչուհին պիտի երեւէր «Տը փլէյ ուոթ ալ ուոթ» թատերախաղին մէջ, մինչեւ որ ան պարելով դուրս եկաւ քուլիսներէն: Ան թոյլ տուաւ, որ մեծ ժողովրդականութիւն վայելող այս կատակերգութեան դերակատարները ծիծաղի առարկայ դարձնեն իր անուրը (գայն կը կոչէին «Քեւին») եւ իր ասպարէզը: Ան նոյնիսկ ծպտուեցաւ Ֆրանսուազի գեր ու ճաղատ կրօնաւորի մը պէս: Իրականութեան մէջ ան դերասանուհի մը չէ: Սակայն հանդիսատեսները տոմս գնած էին խորհրդաւոր հիւր աստղի մը անակնկալ ելոյթին համար եւ ստացան իրենց վճարած գինին փոխարժէքը:



«Տը փլէյ տէր այ ուոթ» թատերախաղը կը վերաբերի Բրիտանիոյ մէջ ամեն աւելի սիրուած երկու կատակերգակ դերասաններու՝ Սորընտի (Շոն Ֆոլայ) եւ Ուայզի (Շեմիլ Սքոլ):

ձգումին: Անակնկալի գործօնը նաեւ կ'օգնէ, որ լրատու գործակալութիւնները շարունակեն խօսիլ թատերախաղին մասին: «Ասիկա թատերախաղը ծանուցելու լաւագոյն միջոցն է. անուանի աստղ մը բեմին վրայ տեսնելու առիթը նոր հանդիսատեսներ կը ներգրաւէ», կ'ըսէ թատերախաղին արտադրիչը՝ Տէյվիտ Փիւկ:

Անուանի աստղերը հրաւիրելու Փիւկի «գիւտը» առիթ տուած է Լոնտոնի թատերասրահներուն մէջ մեծ ժողովրդականութիւն վայելող թատերախաղերու բազմացումին: Ան առաջին անգամ այս հնարքը ի գործ դրած է 6 տարի առաջ, երբ կը բեմադրէր «Արթ» թատերախաղը, որ այս օրերուն իր վերջին ելոյթները կը կատարէ Լոնտոնի մէջ: Փիւկ 12 շաբաթը անգամ մը փոխած է անոր գլխաւոր դերակատարները՝ հրաւիրելով բրիտանական պատկերասրահի զարգացող վրայ հուշակ վայելող կատակերգակներ: Նիւ Եորքի մէջ եւս ան հրաւիրած է անուանի դերասաններ: Արդիւնքը՝ «Արթ» թատերախաղը ներկայացուած է աւելի քան 50 քաղաքներու մէջ եւ ապահոված է 125 միլիոն տոլար:

Բեմադրիչ Լորանս Պոստելզի գաղափարը փոխ առած է իր «Տիս իգ աուր ետի» թատերախաղին համար, որ այս օրերուն կը ներկայ-

ցացուի Լոնտոնի «Կէրիք» թատերասրահին մէջ: «Փիւկ խորտակեց այն մեծամիտ մտայնութիւնը, թէ թատերախաղի մը առաջին դերակատարները հրաշալի խաղարկութիւն կը ցուցաբերեն, իսկ գանձը փոխարինող իւրաքանչիւր խումբ հետզհետէ ղէպի անկում կը տանի գայն», կ'ըսէ Պոստելզ: Ան վերջերս Թոմ Հէնքսի գաւազը՝ Քոլինը հրաւիրած է իբրեւ հիւր դերասան: Նոյնիսկ տարածաշուկայի թուրքեր կան երազային խումբի մը մասին, որ պիտի ընդգրկէ Լէոնարտո Տիքափորին, Թոպի Մկուլայն ու Քիւրթըն Տուլանը, որոնք վերջերս գաղտնի ընթացքով մը համար հանդիպած են Միացեալ Նահանգներու մէջ:

Փիւկ այժմ կը կազմէ ցանկը անուանի դերասաններու, որոնք պիտի ուզէին դեր ստանձնել «Տը փլէյ ուոթ ալ ուոթ» թատերախաղին Պոստելզի ելոյթներուն մէջ: Ֆայնզ եւ Մքլարեկոր դարձեալ պիտի երեւին, եւ «ամէն ոք, Պրէտ Փիթէն մինչեւ Մէրի Սթրիփ, հետաքրքրութիւն ցուցաբերած է», կ'ըսէ ան: Թէեւ հուշակաւոր աստղերու անունները կարելու դեր կը խաղան տոմսերու վաճառքին մէջ, սակայն Փիւկ կը շեշտէ, թէ պարզապէս ոեւէ առաջնակարգ դերասան չի ձգտիր ներգրուել: «Աստղերու թաւալումը մեծապէս նպաստաւոր է վաճառքի առումով, սակայն անոնք պէտք է լաւ խաղարկութիւն ցուցաբերեն եւ հաւասարակշռութիւնը պահուի», կ'ըսէ ան: «Տը փլէյ տէր այ ուոթ» թատերախաղին մէջ աստղերու ներկայութիւնը յաջող արդիւնք կու տայ, երբ անոնք կարծի եւ ուսուցիչ խաղարկութիւն կը ցուցաբերեն եւ առիթ կու տան, որ միւս դերակատարները «աստղով ծակծկեն» գիրքերը: Մեծամիտ ազնուականի երեւոյթով Ֆայնզ իտէալ ընտրութիւն մըն էր այս պարագային, սակայն Մինոկ շատ բարեհամար չէր: Այսուհանդերձ բազմութիւններ սիրելի գայն, իսկ անոր ելոյթին ստեղծած խանդավառութիւնը պիտի ներգրաւէ աւելի մեծ թիւով հանդիսատեսներ:

ՀԱՅՏԸՆԻ «ԿՈՐՍՈՒԱԾ» ՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԳՏՆՈՒԱԾ

«Պի. Պի. Սի.»-ի համաձայն, յայտնաբերուած են ճորգի Հայտնի յորինած օփերայի երգերու ձեռագիր նօթագրութիւնները, որոնք 50 տարի առաջ կորսուած կը համարուէին: 18րդ դարու յորինող Հունգարիոյ Ազգային գրադարանին նուիրած էր 39 օփերաներու ձեռագիրներ, որոնք կ'ենթադրուէին, թէ փճացած էին Բ. Աշխարհամարտին:

Յայտնապէս ձեռագրութիւններ գիպուածով ի յայտ եկած են Պուտափէշտի գործածուած գիրքերու կրպակներէն մէկուն մէջ, ուրկէ գնուած են Հունգարիոյ պետութեան ծառայող մասնագէտներու կողմէ: Պետութիւնը չէ բացայայտած, թէ որքան գումար վճարած է ձեռագիրներուն համար:

Ճորգի Հայտնի ծնած է Աւստրիա, 1732ին: Ան յորինած է աւելի քան 750 գործեր եւ մշակած է աւելի քան 330 երգեր:

Ձեռագիրները այժմ յանձնուած են Հունգարիոյ Ազգային գրադարանին, ուր պիտի պահուին «կղպարներ եւ բանալի տակ», մինչեւ որ վերարտադրուին թուային (տիւիթթը) ձեւով, որպէսզի կարելի ըլլայ ուսումնասիրել գանձը:

«Արուեստի պատմաբաններու կողմէ կատարուած քննութիւնները կը հաստատեն, թէ ձեռագիրները իրական են, - կ'ըսէ պետութեան ծառայող մասնագէտ մը: Շատ զարմացալի տես անոնց յայտնութեան: Կը կարծինք, թէ էսթերիկները իշխանին Պուտափէշտի իշխանական գրադարանին հետ հրոյ ճարակ դարձած էին պատերազմին ընթացքին: Խորհրդաւոր կը մնայ, թէ ձեռագիրները ինչպէս փրկուած են: Հաւանական է, որ անոնք հաւաքածոյնց ի ուսուցանուած են նախքան Պուտափէշտի ուսումնական կենտրոնումը, որովհետեւ չեն վնասուած եւ այրուածքի ոչ մէկ հետք կը կրեն»:

Փոլ էսթերիկ իշխանը Հայտնի գործի հրաւիրած է իրբեւ իր պայաններ ընտանեկան երգիչը: Հայտնի մեծ թիւով գործեր յորինած է այս ընտանիքին հովանաւորութիւնը վայելելով: Նոյնիսկ Փոլ իշխանին մահէն ետք ան շարունակած է յորինել անոր ընտանիքին համար եւ իր գործերուն մեծ մասը նուիրած է իշխանին եղբոր՝ Միքլայ Ջրաշալին:

Պատրաստեց
Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՄԱՐԶՈՒՄԻ ԾՐԱՆԻ...

Շարունակում՝ 4րդ էջէն

Նախաճաշին ետք, ընկեր Յովիկ Պերթիզյան ներկայացուց ներկայ պայմանները լոյսին տակ միջազգային գաղափարախօսութիւնները: Ապա խումբերը ունեցան տասնեակային աշխատանքներ, քննարկեցին երէց փաղանգի մը կայունութեան խախտման պատճառները, խմբապետին եւ փոխ խմբապետին ունեցած դերակատարութիւնները եւ փաղանգը վերականգնելու ձեւերը: Հ.Մ.Ը.Մ-ի նպատակը մեկնարանել գիտնալու մասին. դասախօսեց եղբ. Ներսէս Տօնիկեան, որ մէջ ետք տեղի ունեցաւ պաշտօնական փակումը:

Փակման խօսքը արտասանեց Ծրջանային երէց Երիզ խմբապետ եղբ. Յակոբ Զալաբեան, որ արժեւորեց երկու օրերու ընթացքին թոյր- եղբայրներուն տարած աշխատանքն ու հետեւողական գործունէութիւնը: Ան յաջողութիւն մաղթեց անոնց եւ յոյս յայտնեց, որ սեմինարին դասախօսութիւնները լաւապէս ընկալուած ըլլան անոնց կողմէ եւ լաւագոյն ձեւով ծառայեն իրենց սկառուական աշխատանքներուն եւ ընդհանրապէս անոնց կեանքին ընթացքին:

Սեմինարին մասնակցող թոյր-եղբայրներուն այցելեցին Հ.Մ.Ը.Մ. Լիբանանի Ծրջանային սկառուական խորհուրդը, Ծրջանային խմբապետութիւնը, Լիբանանի համադաշնակցութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբայր Վաչէ Մանարեան, Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսայի խմբապետ եղբ. Պօղոս Մահապատեան:

Ծրջանային սկառու խորհուրդի ատենապետ եղբ. Գէորգ Այանեան սեմինարին մասնակցողներուն ուղ-

ղած իր խօսքին մէջ ըսաւ, թէ պէտք է միշտ առաջնորդուել Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր Բարձրացուր» նշանաբանով: Ան նշեց, թէ մատուցուած գիտելիքներն ու դասախօսութիւնները պէտք է լաւապէս ընկալել, որպէսզի անհրաժեշտութեան պարագային թոյր- եղբայրները կարենան իրենց կարգին իրենց պաշարը փոխանցել այլ սկառուներուն: Ան յաջողութիւն մաղթեց թոյր-եղբայրներուն եւ յոյս յայտնեց, որ առաւելագոյն չափով օգտուին այս սեմինարէն:

ՍԱԿԱՐԱՆ

Պէլրոսի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.	
Սուրիական թղթակի	32,20 - 32,30 լ.ն.
Իրաքեան տիւար	4880,00 - 4890,00 լ.ն.
Քուէթեան տիւար	5010,00 - 5035,00 լ.ն.
Յորդանանեան տիւար	2107,00 - 2117,00 լ.ն.
Պահրէյնեան տիւար	3960,00 - 3985,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիւար	408,00 - 410,00 լ.ն.
Քարաքան ռիալ	411,00 - 413,00 լ.ն.
Սէուտական ռիալ	399,30 - 401,30 լ.ն.
Օմանեան ռիալ	3870,00 - 3895,00 լ.ն.
Եգիպտական կիւն	270,00 - 280,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2460,00 - 2470,00 լ.ն.
Չուիլիեան ֆրանք	1093,00 - 1098,00 լ.ն.
Թրքական լիրա	90,75 - 91,25 լ.ն.
Կիպրական փաուստ	2790,00 - 2815,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,50 - 12,60 լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2,70 - 2,75 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	979,00 - 984,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	873,00 - 878,00 լ.ն.
Եւրօ	1608,00 - 1618,00 լ.ն.

ՈՍԿԻ	
Անգլիական մէկ ոսկի	140,000 - 145,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	126,000 - 131,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	116,000 - 121,000 լ.ն.
Մեքսիկական փէտս	670,000 - 695,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,425,000 - 17,625,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	363,50 - 364,00 \$
Մէկ օնս արծաթ	4,77 - 4,79 \$

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրօ	1.0740 - 1.0745
Քանադական տոլար	1.5263 - 1.5273
Չուիլիեան ֆրանք	1.3675 - 1.3680
Ճափոնական եէն	119.15 - 119.20
Մէկ սթերլին	1.6445 - 1.6455
Մէկ տոլար	586 գրամ

ՍՈՒԿԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ	Գինի Ա. ճշդում	Գինի Բ. ճշդում
Ա. կարգ	4 4/8	4 7/8
Բ. կարգ	5	5

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՆ. 01-252852

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ՏԻՆՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ)

Աշխատանքի պահերուն պիտի ըլլաք պահանջ-կոտ, ինչ որ լաւ ազդեցութիւն պիտի չգործէ ձեր շուրջիններուն վրայ: Զանցեք ըլլալ համակերպող եւ զիջող:

ՏԻՆՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Արդարութիւնը վեհանքն պիտի ըլլայ բոլոր այն մարդոց հետ, որոնք գործ պիտի ունենան իրեն հետ: Հետեւաբար ձեր խիղճը հանդարտ բող ըլլայ այսօր:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Մուրհակները վնասներ օրը օրին, որովհետեւ, եթէ ուշանաք վնասելու, կրնաք տուգանքի կամ տուրքի ենթարկուիլ: Ուրեմն եղեք պարտաճանաչ:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (22 Յունիսէն 23 Յունիս)

Ձեր ամուսինը, բարեկամը կամ բարեկամուհին տագնապ մը կ'անցընէ. դուք լաւ գիտեք հարցին պատճառը, բայց այնպէս կը ձեւեղեք, թէ ոչինչ տեղեակ էր: Ձեր այս կեցածքը սխալ է. ուշքի եկեք:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (24 Յունիսէն 23 Օգոստոս)

Պաշտօնակիցներու միջեւ եղած կեղծիքը եւ երկդիմի կեցածքը երեւան պիտի ելլէ օր ցերեկին: Ոչ որ պիտի ուրախանայ իր ըրած այդ խաղէն:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Աշխատանքի ձեր շրջանակէն հրաւեր մը պիտի ստանաք, որ ձեզ պիտի մղէ կատարելու ընկերային պարտականութիւն մը: Շատ գոհ պիտի մնաք այս հանդիպումէն:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ունիք այն զգացումը, թէ օրը պիտի ըլլայ հանելիք երկուստեք ձեր տեսած յուսահատեցնող հանդիպումէն կամ ձեր տեսած բատարական մէկ ներկայացումէն ետք:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Հոգեք եւ առօրեայ հեքիքը ետք ձեր տունէն դուրս տեղ մը պիտի գտնուիք, ուր պիտի անցընէք հանդարտ ու հանելիք պահեր ձեր սիրելիներուն հետ:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Ձեք կրնաք «ոչ» ըսել ձեր գաւազներուն, կը գնէք անոնց ուզած ամէն ինչը: Բայց մի չափազանցեք ձեր սերը արտայայտելու կեցածքով մէջ:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ունիք յուսահատութեան մատուցած բարեկամ մը. այսօր պարտականութիւն պիտի ստանձնէք զինք մխիթարելու, անոր կորովը բարձրացնելու:

ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Շատ կը վազվզեք, ծանրաբեռնուած էք տեսակաւոր գործերով: Հարկ է, որ քիչ մը դադար տաք այս յոգնութեան, որպէսզի ձեր մարմինը հանգիստ ընէ:


ՏԵՐԿՈՒՆԵՐԱԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Բարեկամներու ընկերակցութեամբ տեղի ունեցանք շատ ազդու երեկոյ մը ձեզ կը սպասէ: Այնքան գոհ պիտի ըլլաք այս խնդրէն զոր երկարատեւ պիտի յիշէք:

ՕՐԱՏԵՐ

ՓՈՒՍՏՈՒՆ ԶՈՒՅԱԿԱՆԴԵՍ / ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ԳԻՐԵՒ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԵՐԵՒԱՆԵՐՈՒ ԱՐՈՒԵՍԻՒ ԳՈՐԾԵՐԸ ԱՄՓՈՓՈՂ ԳԻՐՔ ՄԸ՝ «ԼԱՅՔ ՌՈՉՐԸ ԻՆ ՏԸ ՈՒԻՆՏ»



«Լայք Ռոչըլ Ին Սթու Երեսն» խորագրեալ գեղարուեստական ձեռնարկը հետաքրքրական նախաձեռնութիւնն է «Հասաս» Բնաֆանի մշակութային կազմակերպութեան եւ կը ներկայացնէ քանի մը տարեկան պաղեստինցի գաղթական երեխաներու արուեստի ստեղծագործութիւնները: Գրութիւններ, յուսանկարներ, գծագրութիւններ եւ յաճախ գիծեր ու գոյներ եղող այս գործերուն ցուցադրութեան նպատակն է քաղաքական միջավայրի անկէնդ ձայներուն մասնակցութիւն միջոցով արտայայտել պաղեստինցիներուն ապրած տեղահանութեան, անպահովութեան, գոյատեւումի եւ դիմադրութեան մասին վկայութիւնները: Այս րոչըրը հրատարակուած են «Լայք Ռոչըլ Ին Սթու»

«Այ մատինա» թատերադրանքին մէջ տեղի ունենալիք ձեռնարկի մը ընթացքին պիտի կատարուի գիրքին ներկայացում-վաճառքը: Գեղարուեստի վարպետի հիմնական պաղեստինցի գաղթական այս երեխաները մանկական անվերջութեան կը ներկայացնեն իրենց փրկելու, կը պատմեն իրենց կյանքը եւ կը բաժնեն իրենց երազները:

«Գինձօն, Երեւան» աշուղական երգերու խոսքային ներկայացումը, ժամը 20:00ին, Ազատամարտ ակումբի «Չուխտարեան» սրահին մէջ, էջերէն:

Մուսաֆա Ֆարուքի նուիրուած ցուցահանդէս, Արթուր Բանդարաբեյի մէջ, ժամը 10:00էն 13:00էն 16:00էն 19:00, մինչեւ 8 Մարտ:

Պարային ներկայացում, «Բարաթալայի» «Տեօ Միլի Ե Եւն Նուլ», ժամը 20:00ին, «Պիլի» մէջ:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

Թ. Է. Լ.	15:30-	17:00-	15:00-
10:00- Սապահո	Տիպի քլայ	Արաբական	Հայլուր
12:00- Շիֆր	Ֆիլմաշար	Ֆիլմաշար	15:20- Մուլտֆիլմեր
12:30- Ղաննիխի	19:00- Յըլիսիթի	20:00- Արաբերէն լուրեր	«Քաղաքի մուկը եւ դաշտային մուկը»
Ղաննիխի	20:30- Մէն սաւառակային	20:30- Մէն սաւառակային	«Զգուշացէք, կապիկներ են»
14:00- Ետրոնիուլ	21:30- Ամերիկեան ժապաւէն՝ «Տը սփիթթայրը կրի»		16:00- Հեռուստատեսիայ
14:30- Լուրեր			«Սիրոյ կախարդանք»
15:00- Մըշուր			17:00- Երեկոյեան
17:00- Պէսք սէլըր			Երեւան
18:30- Արաբական			17:20- Ծիծաղի տուն
Ֆիլմաշար			18:10- Սյուր
19:30- Արաբ. լուրեր			18:20- Եկեղեցական
20:00- Մտտեյիս			կեանք
21:00- Մարահ			18:35- Տուն-տունիկ
Ետրոն			19:00- Հայլուր
22:00- Ապու Սելիմ			19:50- Ռակի նշան
			20:00- Երկար
Է. Գ. Ս.			ժապաւէն՝
7:00- Սի. Է. Ն.			«Անիծումները»
Է. Գ. Ս. Ն.			20:25- «Ում է ծայուն կեանքը»
7:30- Սի. Է. Ն.			21:40- Պոէզիայի
Է. Գ. Ս. Ն.			ակնբարձրներ
08:00- Սի. Է. Ն.			22:00- Հայլուր
08:25- Մա քլայ իլլա			22:20- Կէս գիշերային
Հայֆա			ձայնարկ
09:00- Սիտրայի			23:20- Հայլուր
10:30- Նահարոմ			(ռուբերէն)
Սայիտ			23:25- Հայլուր
12:15- Վիտէօ ըլիֆ			(անգլերէն)
13:00- Մորէյիս			23:30- Երեկոյեան
14:00- Մէն խաքոն			Երեւան
քալպի			23:45- Սյուր
15:00- Լուրեր			00:00- Լուր
15:15- Թիթայն			00:05- Top 10
16:45- Էլիէր մուսա			01:00- Լուր
17:45- Պիկ պէյր			01:05- Top 10
19:00- Մըն էմըր			01:55- Նորատետր
Էլէնա			02:00- Լուր
20:00- Արաբերէն			02:05- Top 10
լուրեր			03:00- Հայլուր
20:30- Մարթի ունա			04:00- Հեռուստատեսիայ
21:30- Պաքէթալլի			«Ընդհանուր առեւծում»
23:30- Թէյ օթ			04:25- Ես բաժնետէր
00:00- Եգիպտական ժապաւէն			04:45- Երեկոյեան
			Երեւան
ՄՈՒՍԹՊՊԱԸ			05:00- Երկար
7:00- Լուրեր			ժապաւէն՝
8:30- Այլա			«Անիծումները»
այ սապահ			06:30- Մուլտֆիլմ
10:00- Այմարպալի			«Զգուշացէք, կապիկներ են»
13:00- Յէյ ինֆօ			06:40- Պոէզիայի
13:05- «Յեյթիս Բեքս»			ակնբարձրներ
14:00- Անգլերէն լուրեր			06:50- Սյուր
14:20- Ֆրանսերէն լուրեր			
14:40- Անգլերէն լուրեր			
15:00- Լուրեր			
ՄՈՒՍՏՊՊԱԸ			
7:00- Լուրեր			
8:30- Այլա			
այ սապահ			
10:00- Այմարպալի			
13:00- Յէյ ինֆօ			
13:05- «Յեյթիս Բեքս»			
14:00- Անգլերէն լուրեր			
14:20- Ֆրանսերէն լուրեր			
14:40- Անգլերէն լուրեր			
15:00- Լուրեր			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԵՍՈՒԹՅՈՒՆ

06:00- Առաջին ծրագիր

07:00- Հայլուր

07:20- Առաջին ծրագիր

08:25- Բոնէս

09:00- Հեռուստատեսիայ «Սիրոյ կախարդանք»

09:45- Կէս գիշերային ձայնարկ

10:40- Բարի աղոթակ

11:00- Հայլուր

11:20- Ռուբիկոն +

12:00- Լուր

12:05- Top 10

13:00- Լուր

13:05- Top 10

13:55- Նորատետր

14:00- Լուր

14:05- Top 10

ԱՉԳԱԿ 50 ԵՆՆԵՐԻ ԱՌԱՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՄԻԼԱՆՈՑԻ ՄԷՋ

Միլանոյցի կը գրեն «Ցատաք»-ին. Ջօզեփ Մ. վարդապետին գործունէութիւնը ոգեւորած է Միլանոյի հայ գաղութը. որ Նոյեմբեր 16ին միահամուռ մասնակցեցաւ անոր անգլիացի պատարագին: Ամէն Կիրակի վարդապետը կը պատարագ եւ կը քարոզէ: Համայնքը անխորի կը մասնակցի արարողութեանց եւ կը վաշխէ հոգեկան բաւարարութիւն մը, որուն այնքան կարօտ էր: Նոր հովիւը Միլանոյի անկիւնը երեքին հետ Նոյեմբեր 26ին այցելեց Ամերիկայի դեսպան Զորաբեկի, իսկ Դեկտ. 10ին անգլ. ընդհ. հիւպատոս Քիթթընի եւ վաշխէ շատ սիրով ընդունելութիւն: Նոյեմբեր 25ին այցելեց Միլանոյի Պիլիքի Ինստիտուտի ընդունելեաց անոր պատուակալ անգամակցութիւնը: Վարդապետը հաւանեցաւ դասախօսութիւններ կարդալ սոյն հաստատութիւն մէջ, որ մտաւոր կեդրոնն է անգլիախօս հասարակութեան:

Ջօզեփ վարդապետ Նոյեմբեր 27ին անկիւնը երեքին հետ պատուոյ հիւր եղաւ Պիլիքի Ամերիքըն Կլըրին կողմէ Ամերիկայի Գոհութեան օրուան ստիբով Սալինի մէջ սարքուած մեծ ընթացքին: Այս առիթով հառ մը խօսեցաւ Ամերիկայի դեսպանը:

Դեկտ. 14ին, Կիրակի, Ջօզեփ Մ. վարդապետը համայնքին հայկ. զգեստաւորութեամբ: Ներկայ էին Ամերիկայի դեսպանն ու իր կիներ եւ Բրիտանիոյ ընդհ. հիւպատոսն ու իր կիներ, որոնք մասնակցութեամբ եւ իր կողմէ կ'արտասանէին իրենց վկայութիւնը մը քրիստոնէական հաստատութեան: «Ներքէնդը եւ օրհանգը հայ ժողովուրդին եւ Հայ. կեղեցիկ, որոնք մարտիրոսութեան գնով իրենց հաստատութիւնը պայցուցեցին»: Շատ տպաւորիչ եղաւ երեքին բարգձմաբար մէջքերուն վարդապետը

ԿԻՊՐՈՍ ԻՆՔ ՊԵՏՔ Է ՈՐՈՇԷ ԻՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ԿՆՆԷ Ծ. ՓԱՓԱՆՏՐԵՈՒ

Կիպրոսի վերանվազման առնչությամբ համաձայնություններ են հասնում համար ՄԱԿի ժամկետային ամիսի մը առաջ...

Փափանստրեու, որուն երկիրը ներկայիս է. Միութեան նախագահն է, նաեւ յայտնած է, թէ Թուրքիա կրնայ է. Միութեան անդամակցութեան համար չափանիշներուն հասնելը նոյնիսկ 2 տարիէն:

«Յունաստանն է Թուրքիա սխալներ գործած են Կիպրոսի մէջ: Պէտք է ձգտել, որ Կիպրոս վճռէ իր սեփական ապագան: Պէտք է չորսվի զկանգնիք կիպրոսի», ըսած է ան Աթէնքի մէջ մամլոյ ասուլիսի մը ընթացքին:

Փափանստրեու աւելցուցած է. «Լուծումի մը կը մտենանք»:

Ան յայտնապէս կ'ակնարկէր թուրք բարձրաստիճան 2 չորսվարներու՝ Հիմի Եօզքըի եւ Եաշար Պոլուբանիի, Յունաստանի սկիզբներուն կատարած արտայայտութիւններուն: Անոնք չորակցութիւն արտայայտած են թուրք կիպրացի ղեկավար Իսուֆ Տենքաշի՝ ՄԱԿի ծրագիրին ընդդիմանալու կեցումներին:

Նոյնմեքին, ՄԱԿ արագարկած էր, որ 1974էն ի վեր բաժնուած Կիպրոս Զուլեցերիոյ ղեկավար զաշնակցութեան մը մէջ միանայ:

Տենքաշ նախ ուժգին ընդդիմացած էր առաջարկին: Մակայն ան ներքին եւ արտաքին ուժեղ ձեռնարկներու ետք արձակուած էր՝ իր կեցութեամբ մեղմացնելու համար, տարգարք լուծելու նպատակով:

ՄԱԿ կ'ուզէ, որ երկու կողմերը համաձայնութիւն մը գոյացնեն մինչեւ Փետրուար 28, որպէսզի միացեալ Կիպրոս մը կարենայ անդամակցութեան համաձայնագիր մը կնքել: Միութեան հետ, 2004ին անդամակցելու համար ստոր:

Մակայն երէ մինչեւ այդ ժամկետը համաձայնութիւն չգոյանայ, «աղէտ» մը պիտի չպատահի, ըսած է Տենքաշ Զորքաշարի օր Անգարայի մէջ:

Փափանստրեու յայտնած է, թէ Ուրբաթ օր (այսօր) Ազգայնական կուսակցութեան Միութեան Թուրքիա յարաբերութեանց հարցը քննարկելու համար:

«Երկու երկիրներուն միջեւ (Յունաստանի եւ Թուրքիոյ) պատմական հարցերը կարելի է եւ պէտք է լուծել կարելի եղածին չափ շուտ», շեշտած է ան:

(ԱՅՓ)

ՄՈՍԿՈՒԱ ԶԷ ՅԱԶՈՂԱԾ ԶԵՉԵՆԻՈՅ ԸՄՐՈՍ ԴԵԿԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԱՆՁԵԼ

ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ ՈՒՐՈՇԱՅԼՈ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի բարձրաստիճան մէկ խորհրդակցանք երէկ խոստովանած է, որ Ռուսիա չէ յարողած Չեչենիոյ ըմբոստ դեկավարութիւնը սանձել:

Ռուսիոյ Ապահովութեան խորհուրդի քարտուղար Վլատիմիր Ռուչալո, որ ներքին գործոց նախարար մըն է, յայտնած է, որ Ռուսիա զինուորական «գրական» յառաջդիմութիւն կ'արձանագրէ՝ Չեչենիոյ մէջ երկրորդ պատերազմին սկսուածէն աւելի քան 3 տարի ետք:

Մակայն ան աւելցուցած է, որ Չեչենիա տակաւին անկայուն է: Անոր արտայայտութիւնները կը հակասեն Կրեմլինի հետեւողական շահարարներուն, թէ Մարտին կայանալիք հանրաքուէ մը պէտք չէ յետաձգելի՝ ապահովութեան մտահոգութիւններով:

«Տակաւին չյարձակեցանք լիովին չեզոքացնել այն գրութիւնը, որուն միջոցաւ ըմբոստները հակաշարժի տակ կ'առնուին, մարտական անջատողական հրամանատարներու կողմէ», խոստովանած է Ռուչալո, որ Փութինի մէկ սերտ դաշնակիցը կը նկատուի:

Ռուսիոյ նախագահ Փութինի մէկ սերտ դաշնակիցը կը նկատուի: Ռուսական բանակը կը շարունակէ մեծ կորուստներ արձանագրել, աւելցուցած է ան:

Ան այդ արտայայտութիւնները կ'ունենան, մինչ Եւրոպական խորհուրդին Չեչենիոյ մէջ ներկայացուցիչ Ֆրէնք ճատ երէկ կը սպառնար հրաժարիլ, եթէ Ռուսիա կայացնէ սահմանադրութեան շուրջ հանրաքուէ, որ սկզբունքով պիտի հաստատէ Չեչենիոյ Դաշնակցային Ռուսիոյ մէկ անդամը ըլլալու հանգամանքը:

ՉԵՉԵՆԵՐԸ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՄՊԱՆԱԼԻՔ ԱՍԵՐԿԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Միւս կողմէ, Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութեան գործադիրներէն Իկոր Վոլինքին երէկ Մոսկուա այցելող ամերիկեան պատուիրոսականութեան մը յայտնած է, թէ չեչեն ըմբոստները կը փորձեն ամէն գնով կործակել նիւթեր ձեռք ձեռք անարկելու ղեկավարութիւնը:

Ան ըսած է, թէ յարձակումը վտանգ պիտի

«ՊՈՒՇ ԱՆԱՍՕԹ ԽԱԲԵԲԱՅ ՍՐՆ Է»

Հիւսիսային Քորէա երէկ Մ. Նահանգներու նախագահ ձոր Պուշի արտասանած խօսքը նկարագրած է իբրեւ Փիոնկեանկի դէմ «յարձակողականի հռչակում մը»:

Արտաքին գործոց նախարարութիւնը երկար հաղորդագրութեան մը մէջ նաեւ պայն նկարագրած է իբրեւ «անսուր խաբէբայ մը»:

Պուշ յայտնած էր, թէ Մ. Նահանգներ «շահաբաժնի» պիտի չենթարկուին Հիւսիսային Քորէայի կորիւսային պէքերը մշակելու սպանալիքով: «Հիւսիսային Քորէայի արտաքին գործոց նախարարութիւնը ղիտել տուած է, որ Մ. Նահանգներ որեւէ երկրէ աւելի կորիւսային պէքեր ունին:

«Հակառակ սառ, անոնք կը փորձեն հանրային կարծիքի հաւատարմութիւն, թէ գլխաւորաբար Հիւսիսային Քորէան պէտք է այլապէս կորիւսային տագնապին համար: Ասիկա անաւօրութեան գազաթնակէտն է», ըսած է անիկա: «Անոր վերջին խօսքը յստակօրէն կը փաստէ, թէ ան անսուր խաբէբայ մըն է, որ աշխարհի աչքերուն առջեւ ձեռնարկ ու սեւ կը փոխէ», յայտնած է հաղորդագրութիւնը: (ԱՅՓ)

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՐԿՓԵՂ ԿՈՒԱԾ Է...

Շարունակուած Ա. Էջէն

Նարի նախաձեռնութեամբ: Ան աւելցուց, որ Հունգարիա կարգ մը բարեփոխութիւններ պահանջած է հաւանութիւն տալէ առաջ:

Ֆրանսա յայտարարեց, որ նամակին մէջ նշուած շատ մը կէտեր կը բաժնէ եւ թէ անոնք հետու չեն իր պահանջներէն: Նախագահ Ժակ Շիրաքի մէկ բանբեր ըսաւ, որ Ապահովութեան խորհուրդի անդամներուն մեծամասնութիւնը կը պահանջէ, որ Իրաքի մէջ գործող ՄԱԿի քննիչներուն աւելի երկար ժամանակ տրուի՝ ամբողջացնելու համար իրենց աշխատանքը: Ան աւելցուց, որ Եւրոպական Միութեան բոլոր անդամներն ալ այդ ուղղութեամբ միացեալ յայտարարութիւն մը հրատարակած էին երկուշաբթի օր: Բանբերը ղիտել տուաւ, որ նամակը անակնկալ մը չէր բովանդակեր եւ թէ Ֆրանսա կրնար ստորագրած ըլլալ զայն՝ անոր մէջ նշուած կարգ մը կէտերուն համար: Բանբերը նկատել տուաւ, որ նամակը ստորագրուած է Ե. Միութեան ներկայ ու թեկնածու երկիրներու փոքրամասնութեան մը կողմէ:

Գերմանիա իր կարգին հերքեց, որ հրատարակուած նամակին պատճառով կը մեկուսացուի: Կառավարութեան մէկ բանբերը ըսաւ, որ սխալ է այն մեկնաբանութիւնը, թէ որովհետեւ Գերմանիա կը մերժէ իրաքի դէմ պատերազմի ընտրանքը, ուրեմն մեկուսացուած է:

Միւս կողմէ, Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնի ըսաւ, որ օրուսի խորհուրդը պիտի տրամադրէ ամերիկեան ուժերուն, սակայն ուղղակի պիտի չմասնակցի զինուորական գործողութեան, որովհետեւ կարելիութիւններն ու կարողութիւններն չունին:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով յայտնեց, որ Մոսկուա Ուաշինկթընէն որեւէ փաստ չէ ստացած Իրաք - «Քայտա» ենթագրեալ կապերուն մասին: Իվանով աւելցուց, որ «Քայտա»ի հետ կապեր ունեցած ըլլալու մասին շատ մը յայտարարութիւններ կատարուած են, սակայն անոնցմէ ոչ մէկը հաստատուած է չօրհանելի փաստերով:

«Քայտա»ի հետ կապերու գոյութիւնը հերքեց Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ազիզ, ղիտել տալով որ Պաղատի եւ իշխել կազմակերպութեան գաղափարախօսութիւններուն միջեւ մեծ տարբերութիւն մը գոյութիւն ունի: Ազիզ աւելցուց, որ ամբողջ աշխարհը գիտէ, թէ Միացեալ Նահանգներու գորակցութեամբ եւ օրհանութեամբ Թայբայնը Աֆղանիստանի մէջ իշխանութեան հասաւ 1996ին:

Մինչ այդ, ամերիկեան ուժերու կեդրոնացումը կը շարունակուի Քուէյթի մէջ, ուր աւելի քան 35 հազար ամերիկացի զինուոր կայ ներկայիս: Զինուորներուն կ'ընկերակցին հրասայլեր եւ զրահապատ փոխադրականներ: Քուէյթի ներքին գործոց նախարար չէյի Սոհաձէտ Ուալէտ Սապահ ըսաւ, որ մինչեւ 15 Փետրուար 80 հազարնոց նոր ուժ մը պիտի հասնի՝ 18 մարտանաւերու եւ 350 օդանաւերու ընկերակցութեամբ:

ՍՈՒՐԻՈՑ նախագահ Պաշար Ասատ Ֆրանսոյի պաշտօնակիցին՝ Շիրաքի հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին խորհրդակցութիւններ կատարեց կեցունածքներու համակարգումի մասին Ապահովութեան խորհուրդին մէջ:

ՉԻԼԷԿԱՆ Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան տնօրէն Մոհամէտ Պարատի ըսաւ, որ պազինումը խղճող միջոցներով նուաճելու համար, Իրաք պէտք է բարեփոխէ ՄԱԿի քննիչներուն հանդէպ որդեգրած կեցունածքը:

ՏԻՆԼԱՆԵՍԱ եւ Զուլեցերիա կոչ ուղղեցին Միացեալ Նահանգներուն յաւելեալ առիթ տալու ՄԱԿի քննիչներուն: Անոնք շեշտեցին, որ կարելի եղած բոլոր միջոցներուն պէտք է ղիտել՝ խուսափելու համար պատերազմէն:

ՎԱՏԻԿԱՆ գգուչացուց Միացեալ Նահանգները չբարկացնելու մէկ միջոցաւ իսլամները՝ Իրաքի դէմ գինուորական գործողութեան մը ձեռնարկելով:

ՀԱՐԱԲԱՅԻՆ Ափրիկէի նախկին նախագահ Նեյրըն Մանտեալ ըսաւ, որ Իրաքի դէմ ամերիկեան արշաւին միակ նպատակն է տիրանալ արաբական երկրին քարուղին:

(ԱՅՓ)

ՇԱՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ «ՆՈՒԷՐԸ» ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Շարոնի յաղթանակը եւ կոչ ուղղեց անոր՝ աշխատելու Միջին Արեւելքի իսրայելական համար: Ապիտակ Տան քանրեր Արի Ֆլայշըր ըսաւ, որ Պուշ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցած է Շարոնի հետ՝ քննարկելու Միջին Արեւելքի մէջ արդար ու մնալուն իսրայելականութեան մը հաստատութեան անհրաժեշտութիւնն ու կարեւորութիւնը:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ երէկ վերահաստատեց իր պատրաստակամութիւնը՝ հանգիստում ունենալու Շարոնի հետ: Արաֆատ, որ 14 ամիսէ ի վեր զբեւեռնաւորուած է Իսմայիլիայի մէջ եւ գիւանագիտական մեկուսացումի ենթարկուած Իսրայէլի կողմէ, ըսաւ, որ պաղեստինեան իշխանութիւնը յանձնառու կը մնայ իսրայելականութեան ընտրանքին՝ հակառակ դիմագրուած բոլոր դժուարութիւններուն եւ մարտահրաշակչարար ծպտուած իսրայելներուն: Արաֆատ Զորքաշարի օր այ յայտատեցիք է տեսակցութիւն մը ունենալու Շարոնի հետ, որուն բանբերը սակայն անմիջապէս անկարեւոր նկատած էր յայտարարութիւնը: Աւի Փազնէր ըսած էր, թէ Իսրայէլի համար Արաֆատ գոյութիւն չունի: Ամիսներէ ի վեր, Շարոն կը պահանջէ, որ Արաֆատ իշխանութեանը հետ միջապէս անկարեւոր նկատուի:

Մինչ այդ, իսրայէլեան բանակը կը շարունակէ գործողութիւնները պաղեստինեան շրջաններուն գոյնը: Երէկ արեւածագին, իսրայէլեան ուժերը՝ հրասայլերով եւ պուլտոզըրներով ձեպարոն ներխուժեցին, ուր անմիջապէս կրակմարի գրութիւն հաստատեցին եւ բնակարաններու խուզարկութեան ձեռնարկեցին: Իսրայէլեան ուստիոկայան մը հարկորդեց, որ Հեպորնի գործողութիւնը քանի մը օր կրնայ տեւել:

Թուրքարմի մէջ, իբրեւ արար ծպտուած իսրայէլներուն: Արաֆատ Զորքաշարի օր այ յայտատեցիք է տեսակցութիւն մը ունենալու Շարոնի հետ, որուն բանբերը սակայն անմիջապէս անկարեւոր նկատած էր յայտարարութիւնը: Աւի Փազնէր ըսած էր, թէ Իսրայէլի համար Արաֆատ գոյութիւն չունի: Ամիսներէ ի վեր, Շարոն կը պահանջէ, որ Արաֆատ իշխանութեանը հետ միջապէս անկարեւոր նկատուի:

յացի զինուորները պաղեստինցի երկու ծայրայեղականներ սպաննեցին, յայտնեցին պաղեստինցի պաշտօնատարներ: Իսկ Ժենինի մօտ, իսրայէլեան ուժերը կրակ բացին քարեր արձակող պաղեստինցիներու վրայ՝ քսան վիրաւոր պատճառելով: Նապուլուսի մէջ կատարուած գործողութեան մը ընթացքին ձերբակալուած են 13 պաղեստինցիներ: Տասնեակ մը ուրիշներ ալ ձերբակալուած էին Հեպորնի մէջ:

(ԱՅՓ)

LOLISH ՇԵՂԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Բեմադրիչ ԱՐԵԿ ՏՈՒՐԵԱՆ Լիբանանի մէջ կը ներկայացնէ «WELCOME TO GLENDALE» կատակերգութիւնը 2 արարով

Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ Կարողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Կը ներկայացնէ՝



«ԿՈՄԻՏԱՍ» ՔՈՒԵՍԿԸ

Շաբաթ, 1 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»ին մէջ: Տոմարը սպանալ Գրապոն Նարեկացիէն, Համազգայինի գրախանութէն, «Լ. Շանք» կեդրոնէն եւ կամ հեռաչայնել 01/258300 քիւն:

Banque Audi, BYCOP, GARDEN TOWER SUITE HOTEL, GULBENG CORP.